ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 18 ՀՈՒԼԻՍԻ

Հաղթանակի հրապարակ: Փոքր-ինչ ընդմիջումից հետո, այստեղ նորից ալեկոծեց մարդկային ծովը, և բազմահազար ստեփանակերտցիներ վերստին հավաստեցին իրենց հավատարմությունը մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորման ազնիվ գաղափարին: Այս արտոնված միտինգը տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի կապակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի ժամանման նախօրեին: Եվ, բնականաբար, հիմնական խոսակցությունը ծավալվեց հանձնաժողովի առաջիկա աշխատանքի շուրջը:

—Մենք վաղուց սպասում ենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովին,— իր ելույթում ասաց Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի քարտուղար, Արցախյան հայկական ժողովրդական շարժում— «Միացում» քաղաքային կազմակերպության խորհրդի նախագահ Ռոբերտ Քոչարյանը: —Համոզված եմ՝ հանձնաժողովի անդամներին կընդունենք բարյացակամ և բոլոր պայմանները կստեղծենք նրանց արդյունավետ աշխատանքի համար: Բայց մենք նրանց առջև հանդես կգանք ոչ թե խնդրողի, այլ պահանջողի դերում: Մեր ժողովուրդը վաղուց է արտահայտել իր միահամուռ կամքը՝ մարզը վերամիավորել Հայաստանի հետ: Մենք մեր հարցը լուծել ենք դեռևս 1988 թվականի փետրվարի 20-ին: Վկայությունը՝ ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ խորհրդի նստաշրջանի որոշումը: Հանձնաժողովը ամենից առաջ պետք է այցելի, թե ովքեր են խանգարում մեզ՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործման գաղափարին: Մեր կազմակերպվածությունից, միասնությունից և համախմբվածությունից շատ բան է կախված: Լինենք ողջամիտ ու շրջահայաց, թույլ չտանք իրավիճակի սրում, չենթարկվենք պրովոկացիաների:

—Հայրենակիցներ,— ասաց արտադրական ավտոտրանսպորտային միավորման գլխավոր դիրեկտոր, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Բորիս Դադամյանը,— մեկուկես տարի առաջ ի լուր աշխարհի հայտարարեցինք մեր իղձերի մասին: Ցավոք, մեզ չլսեցին, ավելի ճիշտ՝ չցանկացան լսել: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը, որին սպասում ենք, նորից կուսումնասիրի ղարաբաղյան պրոբլեմը: Ես ձեզ կոչ եմ անում հանձնաժողովի աշխատանքի օրերին դրսևորել ողջախոհություն, թույլ չտալ ոչ մի ինքնագործունեություն: Համոզված եմ՝ մեր պրոբլեմն անպայման կլուծվի: Մենք պետք է լինենք Հայաստանի հետ:

Միտինգում ելույթ ունեցան նաև կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանը, Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի դոցենտ Համլետ Գրիգորյանը, Հայկական ԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի խմբագիր Ռենալ Միրզոյանը: